

HORAIRE D'HIVER
à partir du 23 septembre 2002

Du lundi au vendredi: de 8h15 à 16h00
Samedi: de 8h15 à 12h30

البنك اللبناني الفرنسي
BANQUE LIBANO-FRANÇAISE

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 75ԲԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 162 (21212) ՈՒՐԲԱԹ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2002 10 ԷՁ

ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ
ՓԱՔԻՍՏԱՆԻ ՄԷՋ

Փաքիստանի ներքին գործոց նախարարը երկ կայտարարեց, որ կան կասկածներ, թե Քարաչիի մէջ ձերբակալուած եօթը իսլամականները կապեր ունին Յունիսի Փաքիստանի մէջ ամերիկեան հիւպատոսարանին դիմաց ինքնաշարժի մը պայթուիւնին հետ:

Մուհիտտին Հալաթի թղթակիցներու յայտնեց, որ այլ իսլամական մը, որ անցեալ շաբաթ Քարաչիի մէջ ձերբակալուած էր բախումէ մը ետք, կը կարծուի ըլլայ ամերիկացի լրագրող Տէյնըլ Փըրլի ոճրագործը:

(ՌՈՅԹԸՐԳ)

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ ԺՈՂՈՎ ԱՅՆԷԼ ԹԻՆԷԻ ՄԷՋ

Լիբանանեան կուսակցութիւններու եւ պաղեստինեան կապակերպութիւններու «դիմադրութեան, ինքիֆատայիւն եւ գաղթականներու տունդարձին հետ պօրակցութեան» չորրորդ խորհրդակցական հանդիպումը կայացաւ երէկ, Այնէլ Թիւնէի մէջ. խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի մօտ:



Խորհրդարանի նախագահին մօտ

Ժողովին մասնակցեցան իբրևանեան կուսակցութիւններու եւ կապակերպութիւններու նախագահներն ու ընդհանուր քարտուղարները, ինչպէս նաեւ պաղեստինեան տարկապակերպութիւններու ներկայացուցիչները: Ժողովին իր մասնակցութիւնը բերաւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեան:

Երէկուան ժողովին ուշագրաւ էին ընկերվար Յատաջդիմական Կուսակցութեան նախագահ երեսփոխան Ուալիտ Ժոնայի ղեկավարութիւնը, իսկ Համայնավար Կուսակցութեան ընդհանուր քարտուղար Ֆարուք Տահրուժի բացակայութիւնը:

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի դիտել տուաւ, որ Լիբանան միշտ եղած է եւ կը մնայ իսրայէլեան ախորժակներու եւ յարձակողապաշտութեան զիջարութիւնները, եւ թէ իսրայէլեան բռնազրաւումի հետքերը տակաւին չեն ջնջուած Մապա-

րէի Շրպայէն եւ Քֆարշուպայի բուրներէն, անիկա արգելափակուած կը պահէ իբրևանցի քաղաքանուր քարտուղար Ֆարուք Տահրուժի մանին եւ ծովային խախտումները եւ սահմանին վրայ ու անկէ հեռու իբրևանցի քաղաքանիւներուն կը շարունակէ սպառնալ, իսկ այս բոլորին վրայ միւս յարձակումները «կը հակասեն պաղեստինեան ազգային շահերուն եւ վարչապետ Արիէլ Շարո-

Շար.ը՝ էջ 3

ԹԵԼ ԱԻԻԻ ՄԷՋ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ. 5 ՄԵՌԵԱԼ, ԱՌՆՈՒԱԶՆ 40 ՎԻՐԱԿՈՐ

Թէլ Աւիւի մէջ երէկ անձնասպանական գործողութիւն մը առնուազն 5 զոհ եւ շուրջ 40 վիրաւոր խլեց:

Օթոպիւսի մը մէջ պատահած պայթուումը կը յաջորդէր հիւսիսային իսրայէլի մէջ Չորեքշաբթի օրուան անձնասպանական գործողութեան, որուն պատճառով իսրայէլացի ոստիկան մը սպաննուած էր: Անիկա Օզոստոս 4 էն ի վեր նման առաջին գործողութիւնն էր:



Պաղեստինցի պատահներ կը քարկոծեն իսրայէլեան հրասայլ մը Ռամալլայի մէջ

Պաղեստինեան իշխանութիւնը դատապարտեց երէկուան գործողութիւնը եւ պաղեստինցի կամ իսրայէլացի քաղաքայիններու վրայ բոլոր յարձակումները:

Հաղորդագրութեան մը մէջ, իշխանութիւնը յայտնեց, որ Թէլ Աւիւի յարձակումը եւ քաղաքայիններու վրայ բոլոր միւս յարձակումները «կը հակասեն պաղեստինեան ազգային շահերուն եւ վարչապետ Արիէլ Շարո-

նի եւ անոր կառավարութեան ու բանակին բաւարար պատրուակ կուտան՝ սպաննելու եւ բնաջնջելու»:

Երէկուան գործողութեան գծով անմիջական ստանձնում չեղաւ, սա-

կայն Համասի եւ իսլամական ժիհադի անդամները ողջունեցին յարձակումները ժիհադի շէյխ Ահմէտ Շասին քարձրաստիճան պատասխանատու Ապտալա Շամի յայտնեց, որ յարձակումները «թշնամիին

կ'ըսեն, թէ չենք յոգնած եւ չենք յուսահատած»:

Համասի հիմնադիր շէյխ Ահմէտ Շասին քարձրաստիճան պատասխանատու Ապտալա Շամի յայտնեց, որ յարձակումները «թշնամիին

Շար.ը՝ էջ 10

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՐԱՆԳՆԵՐ ԵՒ ԲՐԻՏԱՆԻԱ ԻՐԱՔԻ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՉԵՆ ՓՈԽԱԾ

Մ. Նահանգներ եւ Բրիտանիա, որոնք հակապատերազմ տրամադրութիւններ կը դիմադրուեն, պիտի փորձեն մշակել բանաձեւ մը, որ Իրաքի մէջ զենքերու քննութեան համար ժամանակացոյց պիտի ճշդէ եւ պիտի հռչակէ, թէ Պաղեստին ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին տասնեակ մը որոշումներ կը բռնաբարէ, յայտնած են դիւանագետներ երէկ:

Մակայն արեւմուտքի քարձրաստիճան դիւանագետ մը ըսած է, թէ հազիւ յառաջիկայ շաբաթ փաստաթուղթ մը կը կրնայ պատրաստուիլ ու մինչ այդ, երկու դաշնակիցները պիտի փորձեն

Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Չինաստանի հետ գէթ մասնակի համաձայնութիւն մը ապահովել: Անոնք 15 անդամ հաշուող խորհուրդին մէջ վեթոյի իրաւունք ունին:

Ռուսիա կ'ընդդիմանայ որեւէ որոշումի, ՄԱԿի զենքերու քննչնեքուն Իրաք վերադարձն առաջ: Ֆրանսա վերապահութիւններ ունի. ինչ կը վերաբերի Չինաստանի, կը նախատեսուի, որ անիկա ձեռնպահ մնայ որեւէ որոշումի պարագային, որ պատերազմի կ'ակնարկէ:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմինիք տը Վիլիէմ երէկ շեշտած է, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհրդի միջոցով կ'արեւմտեան իրաւունքները չեն փոխուած:



Պուշ կը խորհրդակցի Չէյնցիի, Փաուլիի եւ Ռայսի հետ

խորհրդին մէջ Իրաքի ապագիծումին շուրջ համախոհութիւնը Ֆրանսայի թիւ մէկ առաջնահերթութիւնն է եւ Փարիզ բաց մտքով կը մտնենայ այն հարցին, թէ ատր համար բանաձեւ մը անհրաժեշտ է:

Ան «ձորով 1» ծայրահասփիտի կայանին յայտնած է, որ ՄԱԿ կրնայ այլեւս բանաձեւի մը կարիքը չունենալ. հիմա որ Պաղեստին ըսած է, թէ պիտի արտօնէ զենքի քննչներուն վերադարձը. սակայն անիկա կրնայ վաւերացնել բանաձեւ մը, որ կ'ողջունէ այս որոշումը եւ անոնց աշխատանքին պայմանները կը ճշդէ:

Չինաստան երէկ կոչ ուղղած է Պաղեստին, որ մօտ ատենէն արտօնէ զենքի քննչներուն վերադարձը, սակայն անիկա մերժած է ըսել, թէ Պէյճիսի արդեօք գորակից պիտի կանգնի՞ Ուաշինգթոնի եւ Լոնտոնի

կողմէ մշակուող բանաձեւի մը:

Մ. Նահանգներու Սպիտակ Տունը Չորեքշաբթի օր Իրաքի դէմ քայլերու առնչութեամբ երկու ճակատի վրայ արշաւ տարած էր, զենքի քննչներու վերադարձին առնչութեամբ ՄԱԿի կարծիքները պահանջելով եւ պատրաստելով բանաձեւի նախագիծ մը, գոր կը յուսայ, որ Քոնկրէսը պիտի վաւերացնէ զինուորական հաւանական յարձակումի մը ճամբան հարթելու համար:

Նախագահ Ծորճ Պուշ Քոնկրէսէն պիտի պահանջէ առաւելագոյն ճկունութիւնը, մերտոնեայ՝ Իրաքի դէմ զինուորական ուժի գործածութիւնը, ըսած է երէկ վարչակարգին մէկ պաշտօնատարը:

Պուշ տեսակցութիւն մը ունեցած է Քոնկրէսի ղեկավարներու հետ: Տեսակցութեան ատար-

տիւն, ան թղթակիցներու յայտնած է, թէ քննչները սակայն յանձնարարութիւն առած են Նոյեմբերի ընտրութիւններէն առաջ՝ քուէարկելու բանաձեւի մը գծով, որ պիտի արտօնէ քայլեր, Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնը իշխանութենէ հեռացնելու համար:

Պուշ ինքնավստահ կերպով յայտնած է, որ քննչները վերընդունելու Սատտամի առաջարկը ՄԱԿի անդամներուն կողմէ խաղ մը պիտի նկատուի, Իրաքի դէմ քայլերը ուշացնելու նպատակով:

Միջ այդ, Փենթագոնի մէջ, պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտ կոչ ուղղած է Քոնկրէսին, որ Պուշի վարչակարգին անմիջական գորակցութիւն տայ զինուորական հաւանական յարձակումի մը համար:

Ան ըսած է, որ Իրաք պէտք է յստակ գոյնացում մը ստանայ, թէ պէտք է հրաժարի քիմիական, կենսաբանական եւ կորիզային զենքերու ծրագրերէն, այլապէս զինուորական հարձակում պիտի դիմագրուէ:

ՌԱԿԵՆԿԱԾԸ ՎՃՈՍԵ Ե ՊԱՏԵՐԱԶՄԻԼ, Կ'ԸՍԷ ԱԶԻԷ

Իրաքի փոխ վարչապետ Թարէք Ազիզ Չոպուրի իրազեկուած էր Սեպտեմբեր 10-ին իրաքի վերջին զարգացումները:

ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԱՄԱՐ

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԶՕՐԱՎԻԳ՝ ԿԻՊՐՈՍԻ

ԱԹԷՆՔ, 19 (ՌՈՅԹԸՐԳ).- Յունաստան Հինգշաբթի օր պատրաստակամութիւն արտայայտած է Կիպրոսի գծով ՄԱԿի բանակցութիւններուն կողմից կիպրացիներուն Ե. Միութեան համալսական անդամակցութենէն ետք:

Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր՝ Փանոս Պելիքիս, Աթէնքի մէջ թղթակիցներու յայտնած է, որ եթէ երկու կողմերը քաղաքական կամք ունենան, «սպանիսիսի Դեկտեմբերին ետք, տակաւին ժամանակ պիտի ըլլայ լուծում մը գտնելու՝ Կիպրոսի անդամակցութեան համար վերջին գործընթացներէն առաջ»:

Հաւանական է, որ Ե. Միութիւնը նոր անդամներու, որոնց կարգին՝ Կիպրոսի հետ, անդամակցութեան համաձայնագիրը կ'ընթերցանուի Միութեան նախագահութեան ժամանակամիջոցին, այսինքն 2003ի առաջին կիսուն:

Ե. Միութիւնը յայտնած է, որ Կիպրոսի հարցին լուծում մը նախապայման չէ կղզիին անդամակցութեան:

ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌՆՁՈՒԱԾ ՀԱՐՑԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան երէկ ընդունեց Ռուսիոյ նախագահի աշխատակազմի ղեկավար Ալեքսանտր Վոլոշինը, որ Չորեքշաբթի օր Երեւան ժամանած էր:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան ռազմական եւ ռազմաարհեստագիտական մարզերէն ներսհարց: Սարգսեան զանազան խնդիրներու վերաբերող հարցերու վերաբերեալ Վոլոշին անդրադարձան Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի ծրագրէն ներս գործակցութեան ներկայ իրավիճակին: Անոնք նաեւ արժեքները շրջանային զարգացումներուն առնչուող խնդիրներ:

Ալեքսանտր Վոլոշին երէկ աւարտեց Հայաստան իր աշխատանքային երկօրեայ այցելութիւնը: Մոսկուա մեկնելէ առաջ, «Զուարթնոց» օդակայանին մէջ, պատասխանելով լրագրողներու հարցումներուն, Վոլոշին յայտնեց, որ այցելութեան հիմնական նպատակն էր ամրապնդել Հայաստանի նախագահի աշխատակազմի հետ կապերը: Ան տեղեկացուց, որ Հայ պաշտօնատարներու հետ քննարկումներուն շարքին եղած են ռուս - վրացական յարաբերութիւններուն վերջին զարգացումները:

ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՋ ՏԱՆՁԱՆՔԸ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹ Է

Թուրքիոյ մէջ կը շարունակուին չարարանքներու բազմաթիւ պարագաներ արձանագրուելու, յայտնած է մարդկային իրաւանց «Էմըրսի Ինթըրնէշնէլ» կազմակերպութիւնը Չորեքշաբթի օր, տեղեկագիրի մը մէջ, որ օգտակար պիտի չըլլայ Ե. Միութեան անդամակցելու Անգարայի ճիգերուն:

Ալեիք քան 60 հոգիի պարագաները ներկայացնելով՝ «Էմըրսի» յայտնած է, որ տեղեկագիրը ցոյց կու տայ, թէ ոստիկանութիւնը լայնածիր եւ հետեւողական ձեւով կը գործածէ տանջանքի ենթարկելու սովորութիւնը: 60 անձերը տանջանքներու ենթարկուած են այս տարուան Յունուարէն Յունիսի միջեւ:

Ե. Միութիւնը պէտք է մանրամասնօրէն գնահատուած կատարէ՝ Թուրքիոյ եւ Ե. Միութեան թեկնածու բոլոր երկիրներուն մէջ մարդկային իրաւանց մարզին վրայ օրինական բարեկարգումներու գործնական ազդեցութեան, ըսած է «Էմըրսի»-ի Ե. Միութեան գրասենեակին պատասխանատու Տիք Ուսթիկի:

(ՌՈՅԹԸՐԳ)

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ...

Շարունակում Ա. ԷջԵԳ

րը, որոնք Լիբանանի կուլտուրայի արգելիչ իր բնական ջրային հարստությունն օգտագործումը:

Պրորի կոչ ուղղեց՝ կառուցելու անհրաժեշտ ին հարեանաբարական սկզբունքային կեց-ւածքներուն, պատա-գրելու իսրայելեան բռնազրաւումի տակ մնացած լիբանանեան շրջանները եւ մերժե-լու բռնազրաւումի ղիմադրելու իրաւուն-քին ահաբեկչութեան պիտակը:

նչ մէկ արտաքին մի-ջամտութիւն կարելի է ընդունիլ:

Հանդիպումի որո-շումներու հետապնդ-ման յանձնախումբի պեկուցաբեր, նախկին երեսփոխան Չահէր Սաթիպ խօսեցաւ նախ-կին ժողովներու որո-շումներուն եւ աշխա-տանքային ծրագիրին մասին՝ առաջարկելով, որ լիբանանեան եւ արաբական հարցերու մասին Պրորիի ներկա-յացուցած առաջարկնե-րը անոր վրայ աւել-ւանա:

անկախութեան, գերի-խանութեան եւ ընդհա-նոր պատերազմի նե-րու հիմը լիբանանցի-ներուն ազգային միասնութիւնն է, իսկ ազգային միասնու-թեան գլխաւոր պայ-մաններն է արաբ-իս-րայելեան պայքարին ծիրէն ներս Սուրիոյ հետ մեր պօրակցու-թիւնը: Ան նաեւ ընդգը-ծեց ներքին ճակատի վրայ իշխանութենէն ներս հաստատակցու-թեան կարեւորութիւնը:

հալիլ նկատել տուաւ, որ ամերիկեան կառա-վարութիւնը Միջին Արեւելքի դէմ շրջա-յարժեցած է անսխալու-թաց սաստկութեամբ արշաւ մը, իսկ արաբա-կան վարչակարգերու մեծամասնութիւնը խոր քունի մէջ է, մինչ Սուրիա եւ Իրան կը դի-մանան եւ միջոց նեցուկ կը կանգնին լիբանա-նեան եւ պաղեստինեան դիմադրութեանց:

Ան ընդգծեց ազգա-յին միասնութիւնը ամ-րապնդելու անհրաժեշ-տութիւնը՝ հաստատե-լով, որ «մեր միու-թիւնն է մեր կայունու-թիւնն ու ներքին ճա-կատի ամրութիւնը՝ հարուածելու Իսրայելի դաւերուն դէմ մեր պէ-նքը»:

Ապա խօսք առաւ Դովմի Կուսակցու-թեան նախագահ Ժրա-րան Արայժի: Ան նկա-տել տուաւ, որ սուր պայքար եւ հակադրու-թիւն կայ Սուրիայէն հաշի պահանջելու եւ Իսրայելէն հաշի պա-հանջելու կողմնակից-ներուն եւ անոնց տրա-մաբանութեանց միջե-լ: «Լիբանանցիք պէտք է միահամուռ պահան-ջեն, որ Իսրայել հաշ-տուութեան օրէնքին գծով կեցուածք ձեռն-վարանող կողմերը պէտք է յստակացնեն իրենց դիրքորոշումը, որ պէսպիսի անցինք ներքին միասնութեան ամրապնդումին», ըսաւ ան:

Նա սրբական շար-ժումի ղեկավար երես-փոխան Ռուսնա Սատ-նկատել տուաւ, որ այս հանգրուանին Միաց-եալ Նահանգներու եւ Իսրայելի շահերը եւ Իսրայելի շահերը ան-կախ չեն: Պաղեստինի ան-կախութեան շարժումը իրարու կը համընկնին եւ կը համապատասխանեն, մինչեւ իսկ կը նոյնա-նան Լիբանանի, Սու-րիոյ, Պաղեստինի եւ Իրաքի պարագային:

Պաղեստինեան կա-պակեր պոռթիւններու անունով խօսք առաւ Տաթի - Ինթիֆատա շարժումի ղեկավար Ապու Մուսա, որ հա-ւատեց, թէ ամէն գնով պիտի շարունակուի դիմադրութիւնը:

Պրորի նաեւ կոչ ուղ-ղեց՝ պօրայիզ կանգնե-լու իսրայելեան կամքը պարտադրելու փորձե-րուն դիմադրող Սու-րիոյ ռազմավարու-թեան, յանգելու համար արդար եւ ամբողջա-կան խաղաղութեան մը, որ կ'երաշխաւորէ բո-լոր արաբական իրա-ւունքներու առանց նա-խապայմաններու վե-րադարձը:

Ան մերժեց արաբա-կան եւ իսրայելեան եր-կիրներու նկատմամբ Միացեալ Նահանգնե-րու որդեգրած շրջա-փակումի եւ յարձակու-մի քաղաքականու-թիւնը շեշտելով, որ միայն արաբ ժողո-վուրդները իրաւունք ունին վճռելու իրենց ճակատագիրը եւ ձեռն-ելու իրենց վարչաձեւը, իսկ այս առնչութեան

Վնկերվար Յառաջ-դիմական Կուսակցու-թեան նախագահ երես-փոխան Ռայիտ Ժոնսոն-տուրքաւ, որ իր գծով կեցուածք ձեռն-վարանող կողմերը պէտք է յստակացնեն իրենց դիրքորոշումը, որ պէսպիսի անցինք ներքին միասնութեան ամրապնդումին», ըսաւ ան:

Այնուհետեւ ժողովը անցաւ իշտակեցող հարցե-րու քննարկումին եւ որոշեց խորհրդարանի նախագահ Պրորիի խօսքը որդեգրել իբրեւ եզրափակիչ հաղոր-դագրութիւն: Նաեւ որոշումեցաւ յաջորդ ժո-ղովը գումարել երեք ամիսէն, Մուխթարայի մէջ:

البيروت
السفير
الاستقلال
الحرية
الوحدة
التحرير

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

19 Սեպտեմբերի տեղական մամուլը իր առաջին էջով լուսար-ձակի տակ առած է Քրրնէթ Շահուանի հանդիպումին առջեւ դրուած ընտրանքնե-րը, Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Պու-շի կեցուածքները Իրաքի մէջ տեղի ու-նեցող իրադարձու-թիւններուն նկատ-մամբ եւ Իսրայելի մեջ պատահած պաղես-տինեան անմասապա-նական գործողու-թիւնը:

«Անուար» նշած է, թէ վերջին հաղոր-դակցութիւններն ու արտայայտութիւննե-րը կը քննարկուին հանդարտ մթնոլորտի մէջ, Քրրնէթ Շահուա-նի հանդիպումը կը վերահաստատէ պա-պատահած պաղես-տինեան անմասապա-նական գործողու-թիւնը:

մագրաւելու շրջանին մէջ պայթելիք բա-խումներու, որոնք կրնան հապարաւոր պոհեր խլել, քստ թէլ Ալիւի:

«Սաֆիր» նշած է, թէ Սապրայի եւ Շարի-լայի ջարդերուն յիշա-տակին անմասապա-նական գործողութիւն մը տեղի ունեցաւ: «Ինթիֆատան կը շարունակէ ընդդիմու-թիւնը եւ երեք իսրայել-լացիներ կը սպաննէ», գրած է թերթը:

Տեղական լուրերու կարգին լիբանանեան օրաթերթերուն առա-նեցող իրադարձու-թեան շարքին են Քրրնէթ Շահուանի շուրթերուն եւ Կապրիէլ Մրրի ան-չուող հարցերը:

«Տիար» գրած է, «Քրրնէթ Շահուանի հանդիպումը ինչ-զ-շարքի օր կը դրոյի վանդուելու կամ վճռական քայլ մը ա-նելու փոխընտրան-քին առջեւ:

«Լիուա» գրած է, «Մեծ հարուած էլեկտրական գոտի մը՝ Երուսաղէմի շուրջ, 3 իսրայելացիներ սպաննուեցան եւ չորս ուրիշներ վիրա-ւորուեցան. ֆետայա-լը խաղ կը նկատէ եւ կ'ըսէ, որ Մատուալ Հիւսէյն վտանգ կը սպառնայ համաշ-խարհային խաղաղու-թեան:

«Լիուա» գրած է, «Պալարաք» նշած է, թէ անոր երեսփո-խանական պաշտօնը պահելու հարցը կանու-նական հակադիր կար-ծիքներու առիթ կու տայ, Նեպիի Պրորի այս մասին կը յայտա-րարէ, որ հարցին լրջութեան եւ բարոյ-թեան պատճառով անոր ուսումնասիրու-թիւնը ժամանակի կը կարօտի:

«Նահար»-ի համա-ձայն, Պուշ Բոնկրէսը կը պատրաստէ Իրա-քի դէմ պատերազմի սկսելու, իսկ Ռամա-նուանի հանդիպումը Հինգշաբթի օր կը դրոյի վանդուելու կամ վճռական քայլ մը ա-նելու փոխընտրան-քին առջեւ:

«Լիուա»-ի համա-ձայն, Քրրնէթ Շա-հուանի հանդիպումը Հինգշաբթի օր կը դրոյի վանդուելու կամ վճռական քայլ մը ա-նելու փոխընտրան-քին առջեւ:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Քոնկրէ-սին եւ ՄԱԿի Ապառ-վութեան Խորհուրդին մօտ աշխատանքները մեծ թափ ստացած են եւ նախագահ Ճորձ Պուշ կառչած կը մնայ Մատուալ հարուա-նութեան հարցին շեշտելու իր կեցուածքին:

«Նահար» գրած է, թէ Կապրիէլ Մրր կը շարունակէ երեսփո-խանական իր պար-տականութիւնները՝ սպասելով ներկայաց-ուած բողոքին մասին Սահմանադրական դատարանին տալիք որոշումին:

ՍՏԱՅԱՆՔ

- «ԱՆԱՊԱՏԻՆ ԿԱԿԱՉՆԵՐԸ»
Շեղինակ՝ ԻՊՐԱՇԻՄ ԱԼ ԽԱԼԻԼ
Արաբերէն բարձրագոյն ՄԻՇՐԱՆ ՄԱՆԱՍԵԱՆ
Շրատարակութիւն՝
ԳԵՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՅԻ
ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ
Թիւ - 50
- «ԽՐԺԻԹՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ»
(Արաբ էջը եւ քերթուածներ)
Շեղինակ՝ ՕՇԱՆ ԿԱՐՕ
Շրատարակութիւն՝
ԳԵՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՅԻ
ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ
Թիւ - 51
- «ՍՕՐ ԳՐԱՆՈՅԸ»
Շեղինակ՝
ՄԵՐՈՒՇ ԵՐԱՍԵԱՆ
Շրատարակութիւն՝
ԳԵՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՅԻ
ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ
Թիւ - 52
- «ԱՍՏԴԵՐՆ ԱԼ ԿԸ ՄԵՆԻՆ»
(Պոնմեր)
Շեղինակ՝
ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՆՈՒՏԵԱՆ
Շրատարակութիւն՝
ԳԵՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՅԻ
ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ
Թիւ - 53
Տպարան
ԿԱԹՈՂԻԿՈՍՏՈՒԹԵԱՆ
ՇՐՈՒՄՆԵՐԸ
ԿԻԼԻԿԻՈՅ
Աճքիլիաս, 2002
- «ԹՐԹԱԿՑՈՒԹԻՒՆ»
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԵՐԵՐ
- ԿԱԹՈՂԻԿՈՍՏԵՐՈՒ ԵՒ ԱՍԵՆԱՅՆ ՇԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՒ Ը. ՍՈՒՐԱԳԵԿԵԱՆԻ ԿԻԼԻԿԻՈՅ
Կաթողիկոսութեան Արխիեք, թիւ 3
Տպարան
ԿԱԹՈՂԻԿՈՍՏՈՒԹԵԱՆ ՇՐՈՒՄՆԵՐԸ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Աճքիլիաս, 2002
- «ԽՐԱՏ ՈՒՂԻՂ ԸՄԻՍԵՐ ԵՒ ԱՆԱԵՐԻՆ ՄԱՆՈՒՐ ԿԱՐԵՒ»
Շեղինակ՝
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
Թարգմանութիւն եւ ուսումնասիրութիւն՝
ՆԱՐԵԿ ԵՊՍ.
ԱՆԵՏԵՉԵԱՆ
Շրատարակութիւն՝
ՇՐՈՒՄՆԵՐԸ
ԿԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ՊԱՏԻՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ԲԱԺԱՆՍՈՒՆԸ
ԿԱԹՈՂԻԿՈՍՏՈՒԹԻՒՆ
ՇՐՈՒՄՆԵՐԸ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Աճքիլիաս, 2002
- «ՏԻԲԵԹԱԿԱՆ ԲԺՅՎՈՒԹԵԱՆ ԳԱՂՏԻՔՆԵՐԸ»
ՎԱՆԳԱ (Չարմանահրաշ բուժումներ)
Տպարան
ԿԱԹՈՂԻԿՈՍՏՈՒԹԵԱՆ ՇՐՈՒՄՆԵՐԸ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Աճքիլիաս, 2002

SAINT JOSEPH TECHNICAL COLLEGE - BEIRUT
A Branch of Saint Joseph School - Cornet Chahwan

OFFERS

- College Admission Test Preps - SAT & TOEFL
- Technical Baccalaureate
- Microsoft Office User Specialist [MOUS] certificates
- Computer, language, and business certificates

Apply in person every day starting 3:00 p.m.
Beirut Campus: Saint Joseph Technical College Bldg.
[next to Mar Maroun Church - Bauchrieh]
Phone: 01/240444 - Mobile: 03/339524 - 03/354411
E - mail: sjs_college@yahoo.com

1939

ՄԵՐՈՒՄԵԱՆ ԱՐՈՒՆԱՍՏԻՅ ԿԱՐԺԱՐԱՆ ԹԵՔՆԻԲԸԼ ՊԱՔԱԼՈՐԻԱ - BT

Անգլերէն եւ Ֆրանսերէն բաժիններով

Բոլոր անոնց համար որոնք յաջողեցան պրեժովի քննութիւններուն Բոլոր անոնց համար որոնք բախտ չունեցան յաջողելու

- Sales & Commercial Relations
- Interior Design
- Preschool Education
- Architecture Drawings

ՈՒՍԱՆԷ ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՐԱՇՆԱԻՈՐՈՒԱԾ Է ՄԵՐՈՒՄԵԱՆ ԱՐՈՒՆԱՍՏԻՅ ԿԱՐԺԱՐԱՆԻ BT ՂԱՍԱՐԱՆԻ 16 աւարտականներէն 15-ը յաջողեցան 2002-ի պետական քննութիւններուն եւ ստացան Բ Պաքալորիայի համալօր վկայական

Հայ Կաթ. Մերոյեան Արուեստից Կարժարան, Պ. Համուտ, Արաքս Փողոց 280504
www.mesrobian.com

ԲՈՂՈՐ ՄԱՆԱԿԻՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
յատուկ վեղջեր հայկական կազմակերպութիւններու անդամ ուսանող-ուսանողու հիներուն

ԵԹԵ... ԵՐԵՐ

- ՄԻՋՆԱԿԱՐԳԻ դասարաններու աշակերտ եւ, կրնա հետեւել նախապատրաստական (B. P.) դասընթացին:
- Հասած եւ ՊՐԸՎԵԻ դասարան, կրնա հետեւել քուէճի Պաքալորեայի դասարանին:
- Ունի ՊԱՔԱԼՈՐԵԱ, կրնա հետեւել ՓՕ-ԼԻԿԼՈԹԻ համալսարանական դասընթացին:
- Ստաշելի կրթաթոշակ, առաւօտեան եւ երեկոյեան դասընթացը, ֆրանսերէն եւ անգլերէն բաժիններ:

ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈՒՆԸ: Շեճ. 01 - 251320
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ Պ. ՇԵՄԵՍԵԱՆ

ՄԻԿՐՈՒՐԵԱՆ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ԿԱՐԺԱՐԱՆ - ՊԻԲՅԱՅԱ

2002 - 2003 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են:

Կարժարանս կ'ընդունի նախակրթարան աւարտած աշակերտներ 7րդ դասարանէ սկսեալ:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնուրոյն թուղթի լուսապատճեն, 2 լուսանկար եւ վիճակագրոյ:

Արձանագրութեան համար դիմել վարժարանի տնօրէնութեան՝ հեռ. 04-981077 եւ 03-753313:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Ազգային Իշխանութեան Ուսումնական Խորհուրդը, Նկատի ունենալով տնտեսական պայմանները եւ հայ մանուկը իր հարազատ միջավայրին մէջ մնալու եւ մեծնալու անհրաժեշտութիւնը, որոշած է՝

ՍԱՆԿԱՊԱՐՏՆԵՂ ԵՒ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱԿԵՐԸ՝

Մուտք / գանձազանք **180,000 Լ.Ո.** Կրթաթոշակ **390,000 Լ.Ո.**

Հետեւեալ վարժարանները կը կիրարկեն վերոյիշեալ սակացոյցը.

ԱԶԳԱՅԻՆ ԱԲՍՈՐ ԳԱՍԱՐԾԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, ՆՈՐ ՄԻՍ
ԱԶԳԱՅԻՆ Ս. Բ. ՄԱՆԿԱՆՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ՆՈՐ ՄԱՐԸԸ
ԱԶԳԱՅԻՆ ԱԲԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, ԹՐԱՏ
ԱԶԳԱՅԻՆ ՌՈՒԲԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, ՌԸՄԵՅԼ
ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՅՆԾԱՐ
ԱԶԳԱՅԻՆ ՆՈՒՊԱՐԵԱՆ - ԵՐԻՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ, ԹՐԻՓՈԼԻ
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

7րդ Արուեստ



ՍՓԻԼՊԵՐԿԻ ՑԱՆԿԸ. ԹԷ ԻՆՉ Կ՛ՈՒԶԷ ԸՆԵԼ ԲԵՄԱԳՐԻՉ ՄԸ, ՈՐ ԱՄԷՆ ԻՆՉ ՈՒՆԻ

Տասնամեակներ ի վեր շարժապատկերի աշխարհին մեջ իր տիրապետությունը հաստատած բեմադրիչ Սփիլը Սփիլպրոկ իրաբան-չիր տարի կը յաջողի աւելի եւս ամրապնդել իր դիրքը եւ շարժապատկերի գաճազամ բնագաւառներու մէջ նոր իրագործումներով հարստացնել իր յաջողունքներուն ցանկը: Իր վերջին ժապաւեցին՝ «Մայնորիթի ռիփորթ»-ին պատկանող «Թայմ» շաբաթաթերթը հետեւեալ ձեւով կը ներկայացնէ անոր կեանքի ուղին:

Վտանգները: Ան հրապարակ իջաւ Հոլիվուտի համար ցարդ ամենէն սուր մրցակցութիւնը պարող ամրան ընթացքին: Սակայն Սփիլպրոկ լաւատես է: «Պէտք է կացութիւնը յայտնաբերել ըլլայ ամէն ամառ», կ'ըսէ 1975ին «ձոզ» ժապաւեցնով պլոքպասթըր ժապաւեցններու հասկացողութիւնը հրապարակ նետած բեմադրիչը:

Հանդիսատեսը կրնայ նկատել, որ անօրինակ տեսարանները ամէնօրեայ երեւոյթներու հետ միախառնելու Սփիլպրոկի տաղանդը կը մնայ անփոփոխ: Քսան տարի առաջ ան ներկայացուց արտերկրային էակի մը պատմութիւնը, որ սակայն ունէր հանդիսատեսին շատ հարազատ մթնոլորտ: Այս տարի, ան կրնայ ներկայացնէ 21րդ դարու գաղտնի ոստիկան մը, որ կը մտնէ «Կէփ» վաճառանիշի վաճառատուն մը, ուր յատուկ սարքեր, բիրթ միջոցով ինքնութեան ստուգման շնորհիւ, ամէն ինչ գիտեն իրենց յանձնարողներուն մասին: «Գիտաբերական» յական արտադրութիւններ կ'օգտագործեն ներգրաւելու համար հանդիսատեսը: Կան որոշ պատկերներ, որոնք հանդիսատեսը ետ դէպի իրականութիւն կը փոխադրեն», կ'ըստարէ ան:

Երբ բեմադրութեամբ գրադած չէ, Սփիլը Սփիլպրոկ լայն ժամանակ կը յատկացնէ բարեսիրական գործունէութեան, ինչպէս նաեւ իր սփիւտիոյն՝ «Տրիմ-ուորք»-ի տնօրինութեան: Ան արդէն իսկ ծրագրած է իր յաջորդ ժապաւեցնը՝ «Քէյ մի իֆ եու քէն», որ հիմնուած է 1960ական թուականներէ իրական կեանքէ քաղուած պատմութեան մը վրայ, եւ ուր դերեր պիտի ստանան Լէոնարտո Տէ Քափրիսո եւ Թոմ Հէնքս: Ան նաեւ կը ծրագրէ 2005ին պատրաստելիք ինտիմանա ձոնզի հիւնդերորդ բաժինը: «Կնոջ ծանօթացած եմ ժապաւեցնի երկրորդ բաժինին պատրաստութեան ընթացքին, հետեւաբար ամբողջ կեանքիս ամենէն ուրախ յիշատակները ձեռով մը կ'առնչուին այդ ժապաւեցնին», կ'ըսէ ան՝ փորձելով բացատրել, թէ ինչու կը ձեռնարկէ այս

աշխատանքին: Սփիլպրոկ կ'ուզէ անպայման օր մը բեմադրել երաժշտախառն ժապաւեցն մը, «եթէ նոյնիսկ ամբողջ աշխարհը վրաս ծիծաղի»: Քաջաբերական է տեսնել, թէ ինչպէս նոր համալսարանաւարտ մը այսքան ինքնավստահութիւն ունի:



Սփիլպրոկ՝ «Մայնորիթի ռիփորթ»-ի նկարահանումին աշխատանքներուն ընթացքին

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՍՐԱՀՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Շարժապատկերի լիբանանեան սրահներուն մէջ «Մայնորիթի ռիփորթ»-ի ծանուցած ժամանակ մին կողքին, այս շաբաթ կը սկսի ցուցադրութիւնը երկու այլ ժապաւեցններու, որոնք շատ հաւանաբար մնան սփիլպրոկեան նոր գլուխ գործոցին շուքին մէջ:



«Օսթին Փաուլըզ ին Կոլտմենայր» ժապաւեցն

Այս ժապաւեցններէն մէկն է 2000ի արտադրութիւն եղող «Տուէք»-ը (բեմադրիչ՝ Պրուս Փալթրո), որուն մէջ կուսնէ Փալթրո ստանձնած է քարտօքէի մասնակցող երգչուհի մը դերը: Գիշերային գոստափայլի մը մէջ վեց սենյակի երգչուհի կը հանդիպին, եւ անոնք միմեկին սկսած յարաբերութիւններ գարգանալ:

Երկրորդ ժապաւեցն է չինական պատրաստութիւն մը՝ «Շուլին Ֆուրպլո»: Թէ է Անտիալի Բրոնտմենըրը շատոց աւարտած են, սակայն Ֆուլպլոյ սիրահարները առիթ պիտի ունենան այս տարօրինակ ժապաւեցնի մէջ տեսնելու քոնկ Ֆուլի եւ Ֆուլպլոյ մարգածեւերու միաձուլումը:

Հրապարակի վրայ գտնուող ժապաւեցններէն նշենք նաեւ «Տր Պուռն ալտեմիթի» (բեմադրիչ՝ Տուկ Լիմըն) եւ «Լիլո Էնտ Սթիչ» (բեմադրիչ՝ Տիմ Տեպլուս) գործերը: Առաջինը կը ներկայացնէ իր յիշողութիւնը եւ, հետեւաբար, ինքնութիւնը կորսնցուցած լրտես մը (Մէյ Տէյմըն), որ կը հայած է Սի. Այ. Էյ. Ի կողմէ: Միւս կողմէ, «Լիլո Էնտ Սթիչ» Տիգրիի նորագոյն փոքրիկ աղջնակ մը՝ Լիլո, կը բարեկամանայ արտերկրային էակի մը հետ: Անոնք միասին կ'ապրին ուրախ եւ տխուր պահեր: Ընտանիքին կարեւորութիւնը շեշտող այս կենդանի գծանկարը յարմար ժապաւեցն մըն է փոքրիկ հանդիսատեսներուն համար:

Սրահներէն մէկն է «Օսթին Փաուլըզ ին Կոլտմենայր» (Մայք Մայլըզ) եւ Միլի Միլ (Վեռն թրոլը) բանտէն կը փախնին՝ աշխարհը իրենց տիրապետութեան տակ առնելու վճռակամութեամբ: Անոնք կը միանայ ժապաւեցնի հերոս մը՝ Կոլտմենայրը (ղարգեալ Մայք Մայլըզ): Այս րոտիոյն մէջ գտնուող համար Օսթին (անոնք մը եւս Մայք Մայլըզ) կը ճամբորդէ 1975 թուականի եւ կը գործակցի Ֆոքսի Քլուփֆայրայի (Պէննսէ Նորլզ) հետ: Նաեւ կը ցուցադրուի Ֆրանսիական «Մա ֆամ Է քիլ»-ը արքայի կատակերգութիւնը, որուն բեմադիր եւ բեմադրիչ Իվան Աթթալ միաժամանակ դեր ստանձնած է ժապաւեցնի մէջ: «Մա ֆամ Է քիլ»-ը արքայի մեծ պատանու կը բարձրացնէ բեմադրիչին իսկական ամուսնական կեանքին մտահոգութիւնները: Ժապաւեցնի մէջ զլիսաւոր հերոսուհիի դերով հանդէս եկած է անոր կինը՝ Նոն Կլոն, որ սակայն առաւելագոյն կենսակերպի: Ժապաւեցնի մէջ Իվան եւ Շարլոթ ամուսնացած երջանիկ ամուսն է: Կր թուի, թէ ամուսինը ընդունած է կնոջ դերասանական ասպարէզին հետ եկող տհաճ երեւոյթները, յատկապէս՝ ժապաւեցններու սիրային տեսարաններու պարագային: Սակայն օր մը կ'ասկանք ըրոյն կը դնէ անոր մէջ... Բննադատներու կարծիքով, «Մա ֆամ Է քիլ»-ը արքայի յաջող կատակերգութիւն մըն է, որ սակայն առաւելագոյն չափով ազդուած է 1970ականներու հոլիվուտեան ժապաւեցններէն:

Արդէն իսկ հրապարակ իջած է «Օսթին Փաուլըզ ին Կոլտմենայր»

Շաբաթուան Ժապաւեցն

ՍՓԻԼՊԵՐԿԻ «ՄԱՅՆՈՐԻԹԻ ՌԻՓՈՐՏ» ԺԱՊԱՎԷՆԸ ԿԸ ՍԱԽԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԲԱՐՉՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ



Ելեկարկան հետախուզիչ սարդեր կը ստուգեն Թոմ Բրուկի ինքնութիւնը

Գիտաբերական ընթացքի իր վերջին ժապաւեցն «Արթիֆիչըլ Ինթելիգենս»-ին մէջ բուականը 2051 էր: «Մայնորիթի ռիփորթ»-ին մէջ Սփիլը Սփիլպրոկ հանդիսատեսը կը փոխադրէ այս անգամ երբ տարի ուշ՝ 2054 թուականը: Սակայն պագայի այս երկու աշխարհները որքան նման են արհեստագիտական գարգացումներով եւ գիտական «հրաշք»-ներով, նոյնքան ալ կը տարբերին ընդհանուր մթնոլորտով:

«Էյ. Այ.»-ի մէջ մարդամեքենաներու դարաշրջան է: Մարդու նման եւ երբեմն անկէ լաւ սիրելի գիտցող, բայց նաեւ սիրուելի ուզող մարդամեքենաները անհետացած են «Մայնորիթի ռիփորթ»-ի աշխարհէն: Անոնց տեղը գրաւելու եկած են շատ խելացի ինքնաշարժներ, որոնք վեր եւ վար կը սուրան հազարաւոր մեքէ բարձրութիւն ունեցող շէնքերու երկայնքին կառուցուած ուղղահայեաց ցամաքներու վրայ, հետախուզական կատարելագործուած աշխատանքներ տանող «սայլորտային» մետաղեայ սարդեր, մարդոց ինքնութիւնը ծածկելու նպատակով աչքեր փոխելու ապօրինի գործողութիւններ կատարող բոյններ, ընթերցողներուն ձեռքին մէջ ակնբարբի մը մէջ գործող տեղեկութիւններ «սպող» օրաթերթեր եւ այլ... հրաշալիքներ: Սակայն այս բոլորին զգալի կատարելութեան բացակայութեամբ կը կարգուէն աշխարհը անհասկանալի մը մէջ ծփացող երբեք երիտասարդներու՝ «փրիքոյ»-ներու միջոցով յառաջացած «փրիքոյ» դրուիւնը, որ առիթ կ'ընծայէ գաղտնի ոստիկաններու յատուկ խմբակի մը՝ իր սաղմին մէջ ինտելիտ ծրագրուած, բայց տակաւին չգործադրուած ոնիրները:

Քաղաքը խաղաղ վայրի մը վերածող այս կազմակերպութեան եւ ժապաւեցնի հերոսն է Թոմ Բրուկը, որուն գաղտնի ոստիկան ձեռնարկը կը կարգուէն աշխարհը կ'օգտագործէ «փրիքոյ»-ներուն հայրաքաղաք թուրքային տեղեկութիւնները՝ անպարտապահ շարժումներով վերագաստարելով գնոնք եւ յայտնաբերելով հաւանական ռեքորդներուն անունները: Ապագայի արհեստագիտական աշխարհին մէջ հանդիպուող ծիփալու տպաւորութիւնները կը մեղմանան, երբ պետական քննիչ մը՝ Էտ Ուիլիսը (Քուլին Ֆերըլ) կը ժամանէ մինչ այդ ժամացոյցի ճշգրտութեամբ բանող եւ տարածապաշտական ձգտումներ ունեցող հաստատութիւնը: Նորագոյն տեղեկութիւնները քննելով Էտ կը բացայտէ, թէ ձոն կը գտնուի ոնիր մը գործելու եղբին: Ժապաւեցնի թեման աստիճանաբար կը հարստանայ հոգեբանական ենթահոլով: Իր յաջող ասպարէզին ժամերէն ետք կորսուած գաւալի մը եւ քանդուած ընտանիքի մը յիշատակներուն (ղարգեալ թուրքային), թմբեցուցիչներու եւ հոգեկան ընկերւածութեան միջեւ տատանող ձոն կը բռնէ փախուստի ճամբան: Եւ այդ պահէն ետք ժապաւեցնի ընթացքը կ'արագանայ. հերոսն եւ հանդիսատեսը կը սկսին վազքի մը, որուն ընթացքին կը կարգուէն «Մայնորիթի ռիփորթ»-ի հանգոյցները, որոնք բնականաբար իրենց լուծումին կը յանգնեն ժապաւեցնի աւարտին: Իր անմեղութիւնը փաստել փորձող ձոն ամբողջութեամբ կը փոխէ ժապաւեցնի մթնոլորտը: Թէ դերասանական կազմը եւ թէ բեմադրիչը մեծապէս կը յաջողին այս բարդ նիւթով ժապաւեցնը առաւելագոյն կատարելութեամբ հասցնել իր աւարտին:

«Մայնորիթի ռիփորթ»-ը հանդիսատեսին ուշադրութիւնը առաջին հերթին կ'անուանու կը պահէ իր դերասանական կազմին հոյակապ աշխատանքով: Կեդրոնական հերոս Թոմ Բրուկըն միւնչեւ երկրորդական դերեր ստանձնած դերասանները (Մամանկա Մորթըն, Լոյս Սմիթ, Թիմ Պլեյք Նելսըն եւ ուրիշներ) մեծ յաջողութեամբ կը կատարեն իրենց տարօրինակ դերերը: Քննադատներու համաձայն, յիսուռ տարի առաջուան նիւթ մը յիսուռ տարի ետքի մթնոլորտին մէջ տեղադրած այս ժապաւեցնը իւրաքանչիւր քայլափոխի չի դադիր իր նոր գաղտնիքներով հանդիսատեսը գարմացնելու: «Մայնորիթի ռիփորթ»-ը պարզապէս կարելի է նկատել իբրեւ դասական գործի մը վերածուելու բոլոր տուեալները ունեցող ժապաւեցն մը:

ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ

- «ՏԸ ՊՈՒՐՆ ԱՅՏԵՆԹԻԹԻ (Փլանք/Ապրտ, Ընդորտ, Ֆրիուիլ, Զապիթ, Սթարկէյթ, Թրիփոլի)»
- «ՄԱՅՆՈՐԻԹԻ ՌԻՓՈՐՏ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոփիլ, Սեթ Էլի, Սոտեթ, Սթալլէ 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի, Սթարկէյթ / Սոտեթ, Սթալլէ 2001)
- «ՏՈՒԵԹՑ» (Եսփաս, Ամփիր / Սոտեթ, Սթալլէ 2001)
- «ՃԱՆԼԻՆ ՖՈՒԹՊՈՒԼ» (Փլանք / Ապրտ, Ընդորտ, 2ուք, Թրիփոլի) / «ԼԻԼՈ ԷՆՏ ՍԹԻՉ» (Փլանք / Ապրտ, Ընդորտ, Ֆրիուիլ, 2ուք, Թրիփոլի)
- «ՄԱ ՖԱՍ Է ԹԻՒՆ ԱԵԹՈՒՍ» (Եսփաս / Սոտեթ, Փլանք / Ընդորտ, Զապիթ)
- «ՕՐԵՅՆԱ ԶԱՌԵԹԻ» (Ամփիր / Եսփաս)
- «ՖԱՍ ՖԱԹԱԼ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոտեթ, Սեթ Էլի, Կալաքսի, Սթալլէ 2001, Լաւ Սալիմաս)
- «ՕՍԹԻՆ ՓԱՌԵՐԸ ՏԸ ԿՈՒՏԱՄՊԵՐ» (Փլանք / Ապրտ, 2ուք, Ընդորտ, Ֆրիուիլ, Թրիփոլի)
- «ՊԵՏ ԶԱՄՓԸՆԻ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սեթ Էլի, Սոտեթ, Սթալլէ 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի)
- «ՈՒՒՆՏՈՆԵՐԸ» (Ամփիր Սոտեթ, Սթալլէ 2001)
- «ԻՆՍԱՏ» (Եսփաս, Ամփիր, Տիւն, Կալաքսի, Սթալլէ 2001)
- «ՍԵՆԻՊԻ ՏՈՒ» (Փլանք/2ուք Ընդորտ)
- «ՍԱՍ ԱՏ ՕԼ ՖԻՐԸ» (Փլանք / Ապրտ, 2ուք, Ընդորտ, Ամպաստ)
- «ԱՆՏԵՅՅԵՆՆԻԼ» (Եսփաս, Ամփիր, Սոտեթ, Կալաքսի)

□ Գերագանց □ Շատ լաւ □ Լաւ □ Միջակ □ Չենք յանձնարարել □ Չենք դիտարկել

www.hamazkayin.com

ԻՆՉ ԿԸՍԵՆ ԿԱՍ ԿԸՍԵՆ ՓՈԼԻԿԼՈԹ ԲՈՒՄԻ ԵՐԱՆԱԿՆԵՐԸ

«... Փօլիկոյթ Բուլճէն մասնակցեցայ BT3 քննութեանը, Լիբանանի մէջ բարձրագոյն նիշը ապահովող առաջին հինգին մէջ էի: Ապա յաջողեցայ նաեւ TS վկայականի քննութեանը: Այժմ կ'աշխատիմ որպէս գլխաւոր հաշուապահ ուկրէական մեծ ընկերութեան մը մէջ, Պուրճ Համուտ...»:

ԹԱԼԻՆ ՃԱՐԻՔԵԱՆ

ԵՆԻՍԿԱՅԵՐԻ ՄՐԱՀՆԵՐՈՒՆ ԸՆԹԱՁԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ

Եսփաս - 09/212516 - Սոտեթ - 01/616707 - Տիւն - 01/792123 - Սոփիլ - 01/328806 - Քնդորտ - 01/738439 - Ամպաստ - 09/226010 - Ֆրիուիլ - 01/485590 - Ապրտ - 01/292192 - Զապիթ - 09/912503 - 2ուք - 09/221363 - Սթարկէյթ - 08/813901 - Սեթ Էլի - 04/443992

Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

Ռուսաստանի Օրսար Զբոսաշրջորդական Միությունը ԶՈՅԳ ԳԱԳԱԹՈՎ ԵՐԿԻՐԸ

... ԵՄ ԱՆՈՆՑՍԵ ՄԵԿԸ ԱՐԱՐԱՏՆ Է, ՈՒՐ ՆՈՅ ԾՓԱՅՈՒՅ ԻՐ ՏԱՊԱՆԸ:
ԻԱՆ ՍՔԵՐՐԱԳ ԷՋԲ ԿԸ ԿԱՏԱՐԵ ՀԱՅԱՍՏԱՆ, ՆՈՒՐՏՐԿԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԵՐԿԻՐ ՍԸ,
ՉՈՐ ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ԶՐՕՍԱԶԵՐՁԻԿԱԿԱՆ ԵՐԿԻՐՈՒՄ ԵՄ ԳՐԱՒԱԾ:
ՍՏՈՐԵԻ ԹԱՐԳԱՆՈՒՄ ԱՆՈՐ ՅՕՐՈՒՄԸ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է «ՏԻ ԻՆՏԻՓԵՆՏՆԸ ԱՆ ՍԱՆՏԷՅ» ԹԵՐԹԻՆ ՍԷՋ

Ընդհանրապես հայեր իբրևի պրոսաշրջիկ կ'այցելեն Հայաստան եւ իրենց տպավորությունները կը գրեն: Հայաստան տակաւին միջազգային պրոսաշրջութեան քարտէսին վրայ չի գտնուիր: Համացանցի վրայ պրոսաշրջութեան կայքեր հազիւ կը յիշատակեն անոր անունը: Վերջերս բրիտանացի թղթակից Իան Մքքորտաչ իբրևի պրոսաշրջիկ այցելած է Հայաստան եւ յայտնապէս պինք հրաւիրող ընկերութեան շրջապատուի ծրարները ծանուցելու նպատակով՝ «Թուրին փիք քանթրի» վերնագիրով ուղեգրութիւն մը գրած է «ՏԻ ԻՆՏԻՓԵՆՏՆԸ» թերթին կիրակնօրեայ թիւին մէջ (յօդուածը լոյս տեսած է Սեպտեմբեր 15ին: Անոր մէկ տարբերակը «Նոս'պ սիբերը ուրլոյտ» վերնագիրով նաեւ լոյս տեսած է «ՏԵ Սքաթցմէն» թերթին մէջ): Մքքորտաչ թէեւ հետաքրքրական դիտարկութիւններ եւ բաղդատութիւններ կը կատարէ, սակայն երբեմն սխալ տեղեկութիւններ կը փոխանցէ յայտնապէս հայերէնին եւ ընդհանրապէս հայկական սովորութիւններուն անծանօթ ըլլալուն պատճառով (օրինակ, հայերուն մեծամասնութիւնը «Վ» տառը «Ու» չի հնչէր, ինչպէս կը գրէ ան, իսկ հայկական եկեղեցիներու մէջ մայրապետներ չեն երգեր): Ան նաեւ կը խուսափի քաղաքական որեւէ կողմնորոշումէ եւ կը փորձէ «անաչառութեան» սկզբունք մը կիրառել, մէկ կողմէ առանց տատանելու նշելով Հայկական Յեղասպանութիւնը եւ Արարատ լեռան պատմական պատկանելիութիւնը Հայաստանի, միւս կողմէ՝ Արցախի պատգարական պայքարին ընթացքին կործանած ալեքիական Աղտամ քաղաքը հռչակելով «մարդուն անմարդկայնութեան դաժան յիշեցումը»: Այսուհանդերձ ուղեգրութիւնը գաղափար մը կու տայ, թէ գիրքերու ճամբով հայութեան ծանօթացած եւրոպացի մը ի՞նչպէս պիտի դիտէր Հայաստանը:

Ըր ճամբաներու վրայ կարեւոր դիրք ունենալով՝ փոթորկալից պատմութիւն մը ունեցած է, եւ հայերը երկար ժամանակ թշնամիներու դէմ դրած են: Շուրջ 1.5 միլիոն հայեր սպաննուած Յեղասպանութեան ընթացքին: Իրեւ հետեւանք՝ Հայկական Սփիւռքը տարածուած է մինչեւ հեռաւոր շրջաններ եւ գայն կարելի է կարգաւ հարուստ եւ հուշակաւոր դէմքերու ցանկը պարունակող «Հու'գ հու» գիրքի մը պէս: Զարմացալ, երբ լսեցի, թէ Հայկական Սփիւռքին մաս կը կազմէր տնտեսական շահարկումներ կատարող Գալուստ Կիւլպէնկեանը, սիրող երգիչ Շարլ Ազնաւուրը, ճատրիկ խաղող Կէրի Գասպարովը եւ «Տայմ-լըր-Քրայզլըր»ի Քլըք Քլըքերեանը, պարզապէս քանի մը անուն յիշելու համար: Եւ այդ, նաեւ Կալէսի իշխանուհին, որ վաթսուներորդ համեմատութեամբ հայ է:

Հայաստան շուրջ 70 տարի ծաղկած է խորհրդային պաշտպանութեան տակ, մինչեւ իր անկախութիւնը 1991ին: Այնուհետեւ երկիրը տնտեսութիւնը կայունացնելու դժուարին պայքարը կը մղէ: Հիւրասիր Հայերը մեծ ճիգ կը թափեն շրջանի հակամարտութիւնները շրջանցելու եւ Մերձաւոր Արեւելքի մշակութային ու տնտեսական կեդրոն դառնալու համար: Մարդիկ այլեւս զբօսաշրջիկներու փայտէ նտարանները (քիչեր մնացած են) չեն կոտորի գանոնք վառելու եւ տաքնալու համար, սակայն քաղաքին մէջ կարգ մը թաղամասեր տակաւին հոսող ջուրէ գուրկ են ցերեկուան եւ գիշերուան որոշ ժամերու:

Քանի մը ժամ կը քնանած, եւ Նորան ու Բարձրը գիս կ'առնեն Երեւանի այրիացած շէնքէն՝ «Արմենիա» պանդոկէն, քաղաքը պտտեցնելու համար: Կը նկատեմ, թէ Բարձրն՝ հուսկու մարդ մը, կը պատասխանէ Բարձրին եւ Պոպին տարօրինակ անունները կողմ անձերու: Սակայն վերջը կ'անդրադարձան, թէ ասիակ անյարմար անուններու երկիր մըն է. օճառի փոշի մը կայ Պարֆ անունով, անուշահոտերու վաճառատուն մը՝ Արս անունով, իսկ վանք (ի մտի ունեցէք, որ հայերուն մեծամասնութիւնը «Վ» տառը կը հնչէ «ու»), կը նշանակէ մենաստան:

Գարնանային պայծառ արեւուն տակ դէմ յանդիման կու գամ վայելուչ շնորհագարք քաղաքի մը՝ ծառուղիներով եզերուած ճամբաներով կը 1900ական տարիներու տպավորիչ շէնքերով, որոնք աւելի լաւ օրեր տեսած են: Այս բոլորին կեդրոնը Հանրապետութեան տիրական հրապարակն է (նախապէս ծածօթ՝ Լեւինի անունով), որուն մէջ կողմը հսկայական «Արմենիա» պանդոկն է, իսկ միւրը՝ Պատմութեան թանգարանն ու Ազգային պատկերասրահը, որ կը պարունակէ Արեւելեան Եւրոպայի արուեստի մասին գեղեցիկ հաւաքածոներէն մէկը: Մօտաւոր Մատենանարանին մէջ 12 հազար [25 հազար «Ա.»] հին ձեռագիրներ երկրին ժառանգութեան պատմութիւնը կը հիւսեն անշուշտ երկրաշարժութեան մթնոլորտի մը մէջ: Հայաստան Յ. Ք. 301ին քրիստոնէութիւնը ընդունած առաջին երկիրն է աշխարհի մէջ, իսկ հայերէնը, որ կը գործի 38 տառերէ բաղկացած այբուբենով, ցարդ գոյատեւող մասնէն հին լեզուներէն է:

Քաղաքը ազդեցութիւններու եւ չափազանցութիւններու խառնուրդ մըն է: Անիկա յատկապէս երոպական կը թուի իր շատրուաններով, կանաչ գոսալիներով, մայթերու վրայ սրճարաններով, սակայն միաժամանակ նաեւ միջինարեւելեան է եւ ռուսներու: Հսկայական ճակատով շէնքերու կամարներուն մէջ ջինք քալեցէք եւ պիտի յայտնաբերէք փոքր բակերու եւ որթատունկի ճիւղերով ամրացած հին տախտակէ բնակարաններու գաղտնի աշխարհ մը: Դամբարանի նման փոշոտ կոթողները բազած են խարխլած յարկաբաժնիներու կողքին, որոնք կը թուի, թէ ուղղակի Տոսթոյնելաքիի վէպերէն դուրս եկած են: Արեւելեան համեմունք դիզուած են քարանձաւի նման խորունկ գոց շուկային մէջ, Մաշտոցի պողոտային վրայ: Ծանր շարժով ժպտալից կիները հազիւ կ'երեւին դեղին պանիրի քրտնած գէգերու եւ տարաշխարհիկ համեմունքներու ետին: Նուրի եւ ելակի բլուրներ ճամբայ կը բանան սուղուրի թեթեւութեամբ (թելի վրայ անցուած են խաղողի հիւթի մէջ թաթխուած ընկոյզ), եւ մեծ լաւաշներ (փիթա ցացի տեսակ մը) փռուած են բաղնիքի գնդաւոր փսիթներու պէս: Նայլընէ մեծ տոպրակներ լեցուած են իրենց ետեւի ոտքերով իրարու վրայ սողացող հսկայական խնցքեղաններով: Ընկոյզի մաշկի պէս խորունկ մած մորթով ծերունիներ երկար ծխախոտներ ծխելով կը բամբասեն անկիւնները նստած. երբ կը ժպտին, ոսկի ակուսներ կը շողացնեն՝ յայտնաբերելով իրենց դրամը իրենց բերանին մէջ պահպալու նպատակով:

Ամէն ինչ կարելի է գտնել վերնիստի շաքարավազի բեռն շուկային մէջ. նոթագրու-

ած երաժշտութենէ մինչեւ գիտութեան ծառայող հին գործիքներ: Մարդիկ հեռաւոր տեղերէ կու գան, որպէսզի իրենց իրերը ցուցադրեն ծառերուն տակ: Շատերը այնքան ազգատ են, որ նոյնիսկ իրենց հնամաշ իրերը կը ծախեն գոյատեւելու համար: Խորհրդային ժամանակներու յատուկ լույնանուէրներու եւ ատանաբուծներու ալուայ փորող ժանգոտած գործիքներու կողքին կը վաճառուին կատուի ձագեր եւ շնիկներ, երաժշտական ազգային գործիքներ եւ շողողուն գեղանկարներ: Մարթին Սքորսէսի «Տր յաս» թեմքէլըն աֆ Քրայսթ» տապալէնին երաժշտութիւնը, զոր յօրինած է հայ երաժիշտ մը Փիթըր Կապրիէլի գործակցութեամբ, տեղական փոշոպական գործիքի մը՝ սուտուկի նուագով կը հնչէ համակնիով այցելուն:

Հիւստուած բուրբերու մէջ փաթեցած տարեց գիրուկ կիներ կը թափառին բազմութեան մէջ՝ խաւաքարտէ փսիներու վրայ քսաքրըտով լեցուն համադրած խմորեղէն վաճառելով: Նորա ինծի կը սորվեցնէ բառ մը, որ կարծեմ մայր, սակայն քաղաքին մէջ կարգ մը թաղամասեր տակաւին հոսող ջուրէ գուրկ են ցերեկուան եւ գիշերուան որոշ ժամերու:

Գէպի Յաղթանակի զբօսայիցի եւ Մայր Հայաստանի արձանը (նախապէս Լեւինիի [Ստալինի «Ա.»] արձանը) ուղեւորութեան մը վարձատրութիւնը քաղաքին գեղեցիկ համալսարաններն է: Հորիզոնին վրայ գազաթով Արարատը՝ Նոյեան տապալին հանգչած հուշակաւոր վայրը, տպաւորիչ կերպով կը բարձրանայ հարթավայրէն աւելի քան 5000 մեթր, որ նախապէս կը գտնուէր Հայաստանի մէջ, իսկ այժմ՝ Թուրքիոյ, դաժան յիշեցումն է երկրին կորուստներուն:

Բանուկ փողոցները լեցուն են հնամաշ ինքնաշարժներով եւ զարնուած պասերով, որոնք կը շողողան «Քիթ-Քաթ» եւ «Քոքա-Քոլա»ի կարմիր նշաններով: Ցանկարծ երթեւեկ կանգ կ'առնէ, մինչ «Կարեւոր անձնաւորութիւններ» սեւ ապակիներով ինքնաշարժներ խորհրդաւոր շարասիւնով մը կ'անցնին: Քաղաքին մեծ մասը կարելի է քալելով պտտիլ, սակայն երկու գիծերէ եւ 10 կայարաններէ բաղկացած կոկիկ մեթրոն գործածելը խիստ յանձարարելի է: Կայարանները լարերինթոնները ինքնաշարժները կ'արտադրեն կ'անցնին: Պատմամար կ'իջնէք Զօրավար Անդրանիկի կայարանը, եւ ձեզ կը դիմաւորեն Փլյայրի-Ղըններու կապուած պատկերասփիւռի հնադարեան գործիքներ, որոնց զիմաց յափշտակուած նստած են 20ական եւ 30ական տարիքի չափահաս տղամարդիկ:

Մայրաքաղաքէն դուրս եւս կարելի է գիշերել: Հետեւարար այցելուներուն մեծամասնութիւնը մէկ օրուան պտոյտներ կը կատարէ: Երեւանէն դուրս ելլելով կարելի է հասկրնալ, թէ ինչու անոր տաղանդաւոր Սփիւռքէն հայրենիքին. երկիրը բացառիկ գեղեցիկ է: Անոր մեծ մասը կը գտնուի ծովու մակերեսէն 1200 մետր բարձր, հետեւաբար հոն կը տիրեն աշխարհագրական եւ կլիմայական խիստ պայմաններ. ստունաշունչ ձմեռներ եւ կիզիչ ամառներ:

Առաջին հանգրուանն էլ միամիտն է. Հայաստանի կրօնական մայրաքաղաքը: Կը մտնեմ Երզ դարու Ս. Հովհաննէս եկեղեցին: Մուտք եւ խունկով պատուած եկեղեցիին մէջ ոսկեգոյն շուրջառով վարդապետ մը իր երկու օգնականներուն հետ կը թուի, թէ Ռասփուլէի կը կանչէ մեռելներու աշխարհէն՝ գաւառականներու վրայ բարձրացած դասերը վարժելով: Սեւազգեստ եւ անուշիկ երիտասարդ մայրապետներ եւ արածայր սեւ վեղարով վարդապետներ նստած են տախտակէ աթոռներու վրայ եւ անհավակնիւ երգեցողութեամբ կը պատասխանեն:

Էլ միածինը նաեւ աշխարհի մասնէն հին մայր եկեղեցիին եւ դպրիկաներին վայրն է:



Նորավանք, կառուցուած՝ 13րդ դարում

Այստեղ վայելուչ, բայց տխուր աչքերով պատանի դպիրներ մոխրագոյն երկար ներհուսակաւ վերարկուներով կը թափառին պարտէզներու եւ վանական խուցերու շուրջ: Մոմի լոյսով պլպլացող եկեղեցիին մէջ անոնք ծունկի կու գան եւ գետնին կը հպին, մինչ գանգեր կը ղողանղեն դուրսը: Խորանին ալ կողմը, գանձատան մէջ, գոհարազարդ բազմաթիւ խաչերու եւ սկիզներու կողքին կը ցուցադրուի նիգալի մը ծայրը, որ կ'ըսուի, թէ կը պատկանի Քրիստոսի կողին խրած նիգալի, ինչ որ գերագանցապէս տպաւորիչ է նոյնիսկ ոչ հաւատացեալներու համար:

Մտածումներու մէջ կորուած Սեւանայ լիճը անուշ ջուրի աշխարհի մասնէն բարձր աւազանն է: Սեւանը, որ ժամանակին խորհրդային մեծաւորներու նախասիրած վայրերէն էր, այժմ ձեւով մը նահանջած է, սակայն տակաւին կարապետական կը թուի: Այստեղէն մինչեւ հեռաւոր Հաղարծին վանքը տանող տեսարժան ճամբան կ'անցնի լեռնային ճանապարհներէ եւ մինչեւ ծունկ ցեխի մէջ խրած փայտաշէն հիւղակներով գիւղերէ: Լեռնային տեսարանին մեծ մասը կը յիշեցնէ Զուլեցերիան եւ սուր կերպով կը հակադրուի Երեւանի մերձակայ ժայռոտ եւ լուսնային բնապատկերին: Հաղարծինը՝ նուիրումի գանձարան մը, բազմամեծ է գեղեցիկի բլուրի մը գագաթին: Հոն կարելի է հասնիլ խիտ անտառներով ծածկուած երկար ու խորունկ ձորի մը մէջէն, որ երկրին բնութեան այլ վայրերուն պէս խորթ պիտի լինուի «ՏԵ լորտ աֆ տը ռիկկ» ժապաւէնին մէջ:

Նեղ կիրճ մը ի վերջոյ կ'առաջնորդէ դէպի թաքնուած հովիտ մը, որ կը պարփակէ Նորավանքը. անիկա ինծի յիշեցուց Յորդանանի մէջ Փեթրայի վարդապոյն քաղաքը: Հայաստանի տեսարժան վայրերուն լաւ կողմը այն է, որ զբօսաշրջութիւնը տակաւին նոր թափանցած ըլլալով՝ կարելի է վստահ ըլլալ, թէ առաւել կամ նուազ չափով առանձին պիտի վայելէք վայր մը: Հաւանաբար մասնէն տպաւորիչ խոր վերապի պարսպապատ վանքն է: Քիչեւ ետք գիւղի մը մէջէն, ուր հեռաձայնի թեթեւ իւրաքանչիւր սին թագադրուած է արագիւր բոյներով, խոր վերապի յանկարծ կը յայտնուի ծայրի ճօր Արարատի խորապատկերին վրայ: Գծուի հօր Արարատի խորապատկերին վրայ:

Հարաբար մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ գիւղեր մը տարօրինակ շողում մըն է ուղեւորութեան մէջ: Այս անկախ պետութիւնը ճանաչուած չէ գտնուած իրենց երկրի կողմէ, բացի Հայաստանի, եւ երկար ժամանակէ ի վեր Ազրբայճանի դէմ կ'ուրեւնէր կը մղուին անոր տիրանալու համար: Իմբալոթուած Աղտամ քաղաքը, որ ժամանակին ունէր 60 հազար բնակիչ, այժմ անպատկար մարդոց, թափառականներու եւ աւերակներ կողոպտող աւազակներու բնակավայրն է: Աղտամը մարդուն անմարդկայնութեան դաժան յիշեցումն է:

Գիշերները ընդհանրապէս կը վերադառնան Սեւան՝ վայելելու համար ճաշարաններու առատութիւնը եւ գիշերային կեանքը: Հայկական խոհանոցը հիմնուած է աղանդերի վրայ, որ կ'ընդգրկէ ձիթապատուղի տեսակներ եւ աղանդ, սեռուս եւ պանիր, որուն կը յաջորդէ խորովածը: Այս բոլորը կը սպասարկուին առատ գինիով, վոտքայով եւ համեղ քոնեաքով (Չըրչիլլ այլ քոնեաք չէր խմեր): Գիշերային կեանքը կ'երկարի բախտախաղի կեդրոններէ մինչեւ ձորի վրայ պարեր:

Նախքան հեռանալ՝ կը մասնակցեմ Յեղասպանութեան յիշատակի օրուան: Մէկ միլիոն ժողովուրդին հետ կը քալեմ Երեւանի Յեղասպանութեան Յուշակոթողին քովէն եւ ծաղիկ մը կը դնեմ անմար կրակին քով: Արեւուն լոյսին տակ տխուր հանդերձանքով սերունդներ կը յիշեն իրենց անցալը: Տարագաւոր տարեց գիշերները իրենց թոռները կը բերեն իրենց ուսերուն վրայ: Աւելի վայելուչ հանդերձանքով ընտանիքներ չախուժելի պէս կը քալեն միասին: Երկար կաշիէ վերարկուներով եւ գաղտնի աշխարհի մը պատկանելիութեամբ յիշեցող տղամարդիկ՝ խորհրդային ժամանակներէ մնացորդներ, կը սողոսկան անոնց քովէն:

ՋՈՅԳ ԳԱԳԱԹՈՎ...

Շարունակում՝ 7րդ էջէն

Սակայն Հայաստան կը նայի դէպի ապագայ: Եւ եթէ կ'ուզէք տեսնել երկիր մը փոփոխութեան եզրին եւ զբօսաշրջութեան սկիզբը, հարկ է փութալ հոն, նախքան ձեզմէլ գատ ուրիշ մը ձեռնարկէ ուղեցոյցի մը հրատարակութեան:

ՏՈՒԵԱԼՆԵՐ

● **ԻՆՉՊՂԷՍ ՀԱՄՆԻԼ ՀՈՆ**
Իան Մքքուրաչ Երեւան ճամբորդած է «Պրիթիշ Էրուեյք»-ով (www.britishairways.com): Շարաքը երեք թռիչք կայ: Երթուղորդի տոմար կ'արժէ 386 փառնետ: «Սանվիլի Տիւրքի» (www.sunvil.co.uk/euro) ընկերութիւնը 8 գիշերուան շրջապտոյտ մը կ'առաջարկէ 1.577 փառնետի թռիչքը «Հիթրո» օդակայանէն, կեցուցիչներ, ճաշերուան մեծամասնութիւնը, քաղաքին մէջ փոխադրութիւնը եւ ուղեցոյցի սպասարկութիւնը:

● **ՅԱԻԵԼԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ**
Հայաստան մուտքի արտօնագիր մը կ'արժէ 25 փառնետ, զայն Լոնտոնի մէջ Հայաստանի դեսպանատնէն ստանալը կը տեւէ 7 օր: Նախընտրելի է դիմել շրջապտոյտը կազմակերպողին միջոցով: Հայաստանի օդակայանի տուրքը 20 տոլար է եւ հարկ է զայն վճարել ամերիկեան տոլարով, վերադարձի ժամանակ:

Տեղական դրամանիշը հայկական դրամն է: Փոխանակումի սակ՝ 1 փառնետը կ'արժէ շուրջ 800 դրամ: Սթրիքին կամ տոլար կարելի է փոխանակել պանդոկներու մէջ: Երեւանի տարածքին դրամ գանձելու բազմաթիւ ելեկտրոնիկ մեքենաներ կան:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՄՈՒԽԹԱՐ ՆԱԺԻՊ ՅՈՎՀԱՆԼԵՍ ՆԻՐԻՔԵԹԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Սեպտեմբեր 2002, Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Ա. Փրկիչ եկեղեցու մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ԴԱԻԻԹ ԳԱՐԱԿԻՆԼԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Սեպտեմբեր 2002, Նոր Ատաճաթի Ա. Աստուածածին եկեղեցու մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԻ մահուան Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Սեպտեմբեր 2002, Ռըմէյի Ա. Յարութեան եկեղեցու մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԱՐՏԵՄԻՍ ՓԱՍԼԻԿԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Սեպտեմբեր 2002, Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5253

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՒՂՈՒԱԿԱՆ	ՈՒՂՈՒԱԿԱՆ
1. Թելթել խմոր - Ժամանակի միաւոր:	1. Նուաղում - Անվախ:
2. Հայաստանի լեռներէն - Երկնային լուսաւոր մարմին:	2. Դող - Դե՛հ - Արեւելեան տիտղոս:
3. Դեղ մանրելու քար - Թիկոնը:	3. Լուրդա Ասլանեանի զրչանունը - Պորոմիչ - Մովսէս քաղաքներէն:
4. Յարաբերական դերանուն - Անձով գրաւական:	4. Իզական անուն - Անկախաբար:
5. Օրինակելի - Այսինքն:	5. Ամէնօրեայ, առօրեայ:
6. Ոստրէի պատեան - Ժխտական մասնիկ - Զրոտելու սկիւր:	6. Տնկելու ճիւղ - Բորբորում - Այրուբենէն:
7. Թերի - Կանացի օտար շարաթիւթ:	7. Կուլ - Կենդանական սեռ - Ռամկօրէն՝ այր:
8. Օժիտ - Նոյի որդիներէն:	8. Յուրտ - Կրկնուած բաղաձայններ - Ախորժ:
9. Ցուցական անական - Սկաւտ - Հարկաւ:	9. Ժիպակ - Հինտու սիրոյ աստուածը:
10. Հերձուած - Բոլորովին:	10. Կապական օտար անուն - Ամպամած:
11. Խնդիր - Տարեկից:	11. Կակածագին լալ - Իզական օտար անուն:

ԹԻՒ 5252

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	8	0	5	Ա	Ր	Ն	Ս	Ա	Ս
2	Պ	Ո	Տ	Ք	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Յ	Ի	Ո	Ճ	Ք	Ս	Ս	Ս	Ս
4	Ա	Ո	Ն	Ք	Ա	Ս	Ս	Ս	Ս
5	Ք	Ր	Ե	Ն	Ի	Ս	Ս	Ս	Ս
6	Գ	Պ	Ր	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ք	Ր	Ք	Ք	Ք	Ք	Ք	Ք	Ք
8	Ա	Գ	Ա	Ե	Ն	Ս	Ս	Ս	Ս
9	Ն	Ո	Ս	Ն	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Կ	Ր	Ա	Կ	Ս	Ս	Ս	Ս	Ս

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ ԵՐԿՈՒՄ...

Շարունակում՝ 5րդ էջէն

Ինչ կը վերաբերի Հայաստանի հանրային թուրքերի դիրքորոշման մէջ «Թուրք-Հայ Առեւտրական Զարգացման Խորհուրդ»-ին ազդեցութեան, Ազգային ճանաչման կոմիտէի նախկին ղեկավարը յայտնած է, թէ քաղաքական եւ ընդհանրապէս բոլոր տեսակի յարաբերութիւնները հիմնուած են առեւտրական կապերով: «Եթէ առեւտրական կապեր հաստատուին, այլ տեսակի յարաբերութիւններ եւ պիտի ըլլան: Նոյնիսկ եթէ

ՍԱԿԱՐԱՆ

Պէտքերի սակարանը մէջ օտար դրամանշուներու փակման սակագները հետեւեալներն են:

Սուրիական թղթուկի իրաքեան տիւար	50,00 - 51,00 լ.ն.
Քուէյթեան տիւար	4953,41 - 4957,42 լ.ն.
Յորդանանեան տիւար	2124,41 - 2128,42 լ.ն.
Պահիճեան տիւար	3995,00 - 4000,00 լ.ն.
Մ.Մ. Եմիրութեան տիրաւ	408,41 - 412,42 լ.ն.
Քաթարեան ուիւա	412,16 - 416,15 լ.ն.
Սէլուական ուիւա	399,88 - 403,99 լ.ն.
Օմանեան ուիւա	3900,00 - 3930,00 լ.ն.
Եգիպտական կիւն	321,71 - 325,72 լ.ն.
Անգլիական սթերլին	2338,65 - 2342,11 լ.ն.
Չուիցեթիական ֆրանք	1007,25 - 1011,52 լ.ն.
Թրքական լիրա	3,61 - 3,64 լ.ն.
Կիպրական փառնետ	2568,10 - 2572,17 լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,18 - 12,22 լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	2450 - 2451 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	954,60 - 958,65 լ.ն.
Աւստրալիական տոլար	828,95 - 832,70 լ.ն.
Եւրօ	1468,90 - 1474,16 լ.ն.

● **ՈՍԿԻ**
Անգլիական մէկ ոսկի 115,000 - 125,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի 108,500 - 118,500 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի 95,500 - 105,500 լ.ն.
Մեքսիքական փետոս 569,500 - 589,500 լ.ն.
Մէկ քիլոկրամ
ճոյլ ոսկի 15,000,000 - 15,500,000 լ.ն.
Մէկ օսն ոսկի 316,15 - 320,19 լ.ն.
Մէկ օսն արծաթ 4,59 - 4,63 լ.ն.

● **Ամերիկեան տոլարի փոխանակման սակեք.**
Եւրօ 0.9795
Քանադական տոլար 1.5705
Չուիցեթիական ֆրանք 1.4975
Ճափոնական եէն 121.55
Մէկ սթերլին 1.5518

● **ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ**
Գինի Ա. 6շղում Գինի Բ. 6շղում
Ա. կարգ 4 1/8 4 1/8
Բ. կարգ

ՏԻՆՆԻ ԿՐԵՆՆ ԱՍՏՂԵՐԸ

★ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)
Օրը հարուստ է անցուդարձերով: Ոմանք պիտի փորձեն թակարդ լարել ձեր դիմաց: Պիտի հասկնաք անոնց մտադրութիւնը եւ ըստ այնմ պիտի որոշէք ձեր ընելիքը:

★ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
Քիչ մը եւս հետապնդեցէք ձեր ծրագիրը, որ կայ ունի անձի մը հետ: Ի վերջոյ պիտի կարեցաք յաջողի ձեր որոշած հարցը իրագործել:

★ **ԵՐԿՈՒՆՈՒՆԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)
Եթէ ձեր բոլոր յոյսերը դրած էք հաւանական պաշտօնի մը բարձրացման վրայ, կրնաք յուսախաբ ըլլալ: Ուրեմն՝ փնտրեցէք երկրորդ նամբայ մը:

★ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)
Եթէ սխալ մը գործած էք անձի մը հետ գրոյցի պահուն եւ անդրադարձած էք ձեր սխալին, մօտեցեցէք անոր որ ներողամտութեամբ պիտի դիմաւորէ ձեզ:

★ **ԱՌԻԻՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Այսօր շատ ուշադիր պետք է ըլլաք ձեր դրամապահակին, որպէսզի գող մը զայն չվերցնէ: Օրը նախազգրական է:

★ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Վտանգը կը դառնայ ձեր կողակիցին շուրջը: Ուշադիր եղէք զայն պաշտպանելու, հսկեցէք անոր, որպէսզի չզայրուի ձեր չարախոսքով:

★ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Հակառակ ձեր ունեցած լաւ տրամադրութեան՝ կազմակերպելու կարգ մը կարեւոր աշխատանքներ, պիտի չկարենաք իրագործել ձեր նպատակը:

★ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Ձեր շուրջիներուն կամ զաւակներուն հետ անհասկացողութիւն պիտի ունենաք: Ասոր կ'ըսեն՝ նոր սերունդի մեծամտութիւն:

★ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Ձեր խօսքերը ձեր միտքերէն առաջ դուրս պիտի գան ընտանեկան լարուած ընթրիքի մը ընթացքին: Սանձ մը դրէք ձեր լեզուին:

★ **ԱՅԾԵՂՃԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Փոքր նամբորդութիւն մը պիտի ձայնողի անըպատ օդի կամ չնախատեսուած այլ պատճառով մը:


★ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
Գործ մը արագ աւարտելու սիրոյն այսօր հապանակ համայնագիր մի՛ ստորագրէք, այլ նոր պայմանագրով մը առաջարկեցէք: Կրնաք նաեւ ուրիշներուն խորհուրդին դիմել:

★ **ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)
Այսօր երկուսն խնդրալուրջութեամբ պիտի չունենաք, սակայն պիտի գտնուի փոքր հաճոյք մը, որ պիտի բարելաւէ ձեր տխուր տրամադրութիւնը:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶՐՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

«ԹԵՐՄԻՐՄ 2002»-Ը ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



«Թերմիրմ» ցուցահանդէսէն անկիւն մը

Տեղեկատուական արհեստագիտութեան նորութիւններն ու արտադրութիւնները համախմբող ցուցահանդէս մը այս օրերուն տեղի կ'ունենայ Պէյրութի ցուցադրութիւններու «Պիէլ» կենդանի մէջ՝ նախաձեռնութեամբ «Ճիթէքս 2002» ընկերութեան, կազմակերպութեամբ «Լեպընըն Օփորթիւնիթի» ամսաթերթին եւ հովանաւորութեամբ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի:

Միջազգային տարողութիւն ունեցող այս ցուցահանդէսին կը մասնակցին տեղեկատուական արհեստագիտութեան համաշխարհային շաբաթուաթիւնի միջնէ 22 Սեպտեմբերէն իր դռները կը բանայ ամէն օր, կէսօրուան ժամը 3:00էն մինչեւ 10:00: Յուրանդէսին առնչութեամբ «Պիէլ»-ի մէջ տեղի կ'ունենայ արհեստագիտական նիւթերով համագումար մը, որուն ընթացքին կ'արժարծուին

Լիբանանի մէջ արհեստագիտութեան շրջան մը ստեղծելու կարելիութիւնները, ինչպէս նաեւ տեղեկատուական արհեստագիտութեան առնչուած այլապան նիւթեր:

Պէյրութի մէջ նման տարողութեամբ եւ այլապանութեամբ ցուցահանդէսի մը կազմակերպումը ցուցահանդէսէ քաղաքին վերաշխուժացման եւ շրջանին ներքին գիտութիւններու 10:00: Յուրանդէսին առնչութեամբ «Պիէլ»-ի մէջ տեղի կ'ունենայ արհեստագիտական նիւթերով համագումար մը, որուն ընթացքին կ'արժարծուին

ՀԵՌԱՏԵՍԻԼ

10:00 - Սապահո	18:30 - Միւլիթիւն	15:00 - Հայրուր
12:30 - Միւլիթիւն	20:00 - Արաբերէն	15:20 - Մուլտֆիլմեր
		«Քաղաքի մուկը եւ դաշտային մուկը», «Չգուշացէք, կապիկներ են»
13:00 - Մարտի հանս	20:30 - Ռուսում	16:00 - Հեռուստատեսիայ
14:00 - Եւրոնիւզ	Մուրաբիթա	«Սիրոյ կախարդանք»
14:30 - Լուրեր	Ման	17:00 - Երեկոյեան
15:00 - Մըշուար	սաեարպահ մայիոն	Երեւան
17:00 - Պէս սելըր	21:30 - Ամերիկեան ժապաւէն	17:20 - Միծաղի տուն
18:00 - Շրլի Հոլմ		18:10 - Այլուր
18:30 - Արաբական ֆիլմաշար	ԷՆ. ՊԻ. ԷՆ.	18:20 - Եկեղեցական կեանք
19:30 - Արաբ. լուրեր	15:00 - Լուրեր	18:35 - Տուն-տունիկ
20:00 - Տեղական ֆիլմաշար	16:00 - Մանա ու ֆիլմ	19:00 - Հայրուր
22:00 - Տեղական ֆիլմաշար	17:00 - Վաւերագրական	19:50 - Որակի նշան
23:00 - Ամերիկեան ֆիլմաշար	17:30 - Սինեմա / 35 mm	20:00 - Երկար ժապաւէն՝ «Անիծումները»
	18:00 - Նո ըմենթ	20:25 - «Ում է ժպտում կեանքը»
	18:15 - Թիֆուսա	21:40 - Պոէզիայի ակնարկներ
	19:00 - Լուրեր	22:00 - Հայրուր
	20:00 - Մըն	22:20 - Կէս գիշերային ձայնաշար
	այ սապահիս	23:20 - Հայրուր (նուսերէն)
	20:30 - Արաբական յայտագիր	23:25 - Հայրուր (անգլերէն)
	22:00 - Մասայա	23:30 - Երեկոյեան Երեւան
	23:00 - Թաքիթ	23:45 - Այլուր
	այ ետում	00:00 - Լուր
		00:05 - Top 10
		01:00 - Լուր
		01:05 - Top 10
		01:55 - Նոթատետր
		02:00 - Լուր
		02:05 - Top 10
		03:00 - Հայրուր
		04:00 - Հեռուստատեսիայ «Լեռնալուսի առեղծուածը»
		04:25 - Եւրոպական եւմ
		04:45 - Երեկոյեան Երեւան
		05:00 - Երկար ժապաւէն՝ «Անիծումները»
		06:30 - Մուլտֆիլմ՝ «Չգուշացէք, կապիկներ են»
		06:40 - Պոէզիայի ակնարկներ
		06:50 - Այլուր
		(*) Վերլուծելու լայն տարածութեամբ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններ:

